ԿԿ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

<< ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-18/12 >> ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արտաշատ <<05>> <<ապրիլ>> 2018թ., ժամը 17:55

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արսեն Եփրեմյան

Անդամներ՝ Ղարիբ Հարությունյան

Կարեն Պողոսյան

Գեղամ Արշակյան

Արեգա Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Փայլակ Հակոբյան

1. <<Սասունասար >>ՍՊԸ –ին գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության թիվ 2 որոշումով ուղղարկվել է ծանուցում փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու:

1.1 <<Սասունասար >>ՍՊԸ -ի կողմից գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղղարկվել է փաստաթղթերի ոչ շտկված տարբերակը:

1.2 Տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշով <<Սասունասար >>ՍՊԸ -ի կողմից ներկայացվել է հետևյալ տեխնիկական միջոցների վարձակալության պայմանագրեր՝

Պայմանագիր որը կնքված է 08 հունվար 2016 թ որի ժամկետը լրացել է :

Պայմանագիր որը կնքվել է 08 հուլիս 2018 թ որով պայմանագիրը իրավական ուժ չունի:

Պայմանագիր կնքված է 01 հուլիս 2017 թ, կնքված է միակողմանի, բացակայում է երկրորդ կողմի կնիքը և ստորագրությունը:

Բացակայում է ՏԱՎ-2,6 /Գ-53Ա/ 15os063 հատուկ բեռնատար ավտոաշտարակի տեխնիկական միջոցի գրանցման վկայագիրը:

Արձանագրություն 4 ում կցվում է մասնակցի կողմից ուղղարկված տեխնիկական միջոցների վարձակալության պայմանագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0: